ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Տեղեկացվում է Ձեզ, որ Արմավիրի մարզի «Ֆերիկի Ոզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց›› ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված է մրցույթը հետաձգվել է մասնակցության հայտերի բացակայության պատճառով, նույն կարգի 6-րդ կետով փաստաթղթերի ժամկետը երկարացվել է մեկ անգամ, 15աշխատանքային օրով::

Մրցույթը կկայանա 2022թ.մայիսի 2-ին՝ ժամը $15^{00}$-ին:

Կից ներկայացվում են քաղվածք կառավարման խորհրդի համապատասխան նիստի N°8 արձանագրությունից և հայտարարության տեքստը:

Առդիր՝ 1 թերթ և 1 էլեկտրոնային նյութ:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա.Ղորղանյան

29.03.2022թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ Ա-05449-2022
29 03 2022թ.

# Արձանագրություն N 8 28.03.2022 թ.

2022թվականի մարտի 28-ին կայացավ ‹‹Ֆերիկի Ոզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց››ՊՈԱԿ-ի և ‹‹Գեղակերտի միջնական դպրոց››ՊՈԱԿ-ի կառավարման միացյալ խորհրդի նիստ, մասնակցությամբ 7 անդամների :

**Օրակարգում՝- 1.** ‹‹Ֆերիկի Ոզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց››ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի փաստաթղթերի հայտերի հավաքագրման և գրանցման ժամկետը երկարացնելու վերաբերյալ հարցի քննարկում: (Զեկուցող խորհրդի նախագահ՝ Ա.Ղորղանյան):

**Լսեցին.**-Օրակարգի հարցի վերաբերյալ խորհրդի նախագահ՝ Ա.Ղորղանյանի տեղեկատվությունը:

Ներկայացվեց հետևյալը.

Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության կարգի 6-րդ կետի պահանջներին համաձայն, մասնակցության հայտերի բացակայության դեպքում փաստաթղթերի ընդունման ժամկետը երկարացվում է մեկ անգամ տասնհինգ (15)աշխատանքային օրով:

Առաջնորդվելով տնօրենի ընտրության (նշանակման) գործող կարգի դրույթներով և հիմք ընդունելով կառավարման խորհրդի նախագահի տեղեկատվությունը դպրոցի կառավարման խորհուրդը

**ո ր ո շ ու մ է**

1. Տնօրենի թափուր տեղի մրցույթի մասնակցության համար փաստաթղթերի ընդունման ժամկետը երկարացնել մեկ անգամ մինչև 2022թվականի ապրիլի 18 ը
2. Մրցույթը ըստ գործող կարգի նշանակել 2022թվականի մայիսի 2-ին ժամը 15:00 ի

Կառավարման միացյալ խորհրդի նախագահ՝ Ա.Ղորղանյան

**ՀՀ Արմավիրի մարզի ‹‹Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց›› ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է բաց մրցույթ՝ հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար:**

Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1 ՀՀ քաղաքացիությունը.

2 ‹‹Հանրակրթության մասին›› օրենքի 12-րդ հոդվածի 17-րդ մասով սահմանված հիմքերի բացակայությունը:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են՝

1 Դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2 Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը (բնօրինակի հետ),

3 Հաստատության ղեկավարման իրավունքի /հավաստագրի/ պատճենը(բնօրինակի հետ),

4 Տվյալ հաստատության զարգացման ծրագիրը, որը /հավակնորդը կարող է ներկայացնել մինչև գործերի ընդունման ժամկետի ավարտը/ /այդ թվում՝էլեկտրոնային տարբերակով/,

որը խորհրդի որոշմամբ լիազորված խորհրդի անդամը հավակնորդի կողմից տրամադրելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է հրապարակման տվյալ դպրոցի պաշտոնական կայքում,ինչպես նաև տրամադրում է նաև խորհրդի մյուս անդամներին:

5 Ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակի հետ:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Փաստաթղթերն ընդունվում են 2022թ մարտի 29-ից մինչև ապրիլի 18-ը ներառյալ ,ամեն օր ժամը 9:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ կիրակի օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից «Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց›› ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա 2022 թվականի մայիսի 2-ին՝ ժամը 15:00-ին, ‹‹Ֆերիկի Ռզալիե Ռաշիդի Օզմանյանի անվան հիմնական դպրոց›› ՊՈԱԿ-ում, հասցեն՝ գ. Ֆերիկ, Բարեկամության 2:

Տեղեկությունների համար դիմել

Հեռախոս՝ 093-72-57-59,093-637-656

Էլ. փոստ՝ ferikidproc@mail.ru: